

ցի հնոյ ըստ իւրաքանչիւր կարգի, ի յետկոյս շատրաւանի, որ ի քարեայ բացօթեայ բակի, բոլորեալ զառաջեաւ արտաքին սովորական դահլիճի Վեհարանի՝ կանգնեցան կիսարուորակ իմն կազմեալ։ Արքեպիսկոպոսունք Գէորգ Վեհապետեան, Մակար եւ Սարգիս Զալաւեան միացեալ էին ընդ նոսս, ըստ պաշտօնական պարտաւորութեանց, կախեալ զպարանոցօքն զպանակէս, ղիսաչանչանս, ետեալ եւ զայլ նշանս արքունականս։

Եւ զինի պատրաստութեանց, եկն եւ կանգնեցաւ Վեհ։ Հայրապետ զառաջեաւ առաջին պատուհանի բացելոյ, առաջի Աթոռոյ եւ ի վերայ Խալիչայի յատուկ եղելոյ, ի ծայր որոյ կայ արծաթեայ աշտանակ միջակադիր լուցեալ մոմով։ Ետեալ ի գլուխ զվեղար, առանց փելոնի, կախեալ եւ զարծիւ, զուանակէ եւ զայլ նշանս։

Անմիջապէս մի ոմն ի վարդապետաց յառաջ մատուցեալ՝ կանգնեցաւ յատենի եւ սկսաւ զՄալքանս քարողիւ ի ձայն՝ Եղբարք սիրեցեալք (4 տուն), եւ ի վերջ իւրաքանչիւր տան ասէին դպիրք կանգնեալք առանձին յատենի ի ձայն՝ Օրինեալ է Աստուած։ Ապա երգեցին միարանք եւ դպիրք խմբովին զծանր եղանակ Հայր մեր յատուկ։ Դարձեալ ասաց մի ոմն ի Միարանից եւ ի ձայն զքարող՝ բարեխօսութեամբ Սրբուհոյ Աստուածածնի եւ Սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչի (5 տուն), եւ Միարանք եղանակեցին՝ Ամեն։ Յետ որոյ երգեցին միահամուռ եւ սրտաշարժ զերգն՝ Աստուած հզօր (4 տուն)։ Խաչակնքեալ օրհնեաց զՄիարանութիւն եւ գհամայններկայս, որք և խոնարհեցուցին զգլուխս։ Քարող՝ Տէր մեր և Փրկիչ (1 տուն), եւ մի ոմն ի Միարանից ընթերցաւ զուղերձ։ Ապա՝ Սուրբ Խաչիւս . . . եւ այսպէս աւարտեցաւ սոյն այս մաս եղանակաւոր Մաղթանաց։

Ի ժամ Մաղթանաց, յորժամ երգէին Աստուած հզօր զերգն յատուկ, Գանձապետ Մայր Աթոռոյ և մի ոմն ի սարկաւագաց կայեալ ի ձեռին զսկուտղ արծաթեայ, յորոյ վերայ շարեալ էին դրամք՝ ըստ հնոյ սովորութեան, եկին յատեան եւ խոնարհեցուցեալ զգլուխ իւրեանց առաջի Վեհ։ Հայրապետի դարձան առ միարանս, եւ զանձապետն առեալ զդրամս՝ մաս առ մաս՝ սկսաւ ըստ կարգի բաժանել եպիսկոպոսաց ղինգական ոռւրլի, վարդապետաց զերեքական ոռւրլի, սարկաւագաց զմի – մի ոռւրլի թղթադրամս, եւ զպրաց եւ աշակերտաց զմի – մի տպասի (20-ական կոպէկս)։ Եւ յետ աւարտելոյ, տըւեալ ի նորոյ զգլուխ առ Հողեւոր Տէր, ի դիմաց որոյ նուիրեն այս մաղթանադրամք, որպէս և պարզեւք եւ այլն, գնացին ի զանձատուն։

Խսկ ուխտ Միարանութեան ըստ աւագութեան կարգի՝ միարար եւ ընդ խոնարհադոյն հին զուռն (կից գանձատան) ի Վեհարան, եւ

վե ՎԵՀ. Հայրապետ գնացեալ էր ի ներքին մեծ սրահ ընդունելութեան Ծաղկեայ այլան ասացեալ, ուր ի պատուանդանաձեւ բաժանման ի վերայ առիւծաքանդակ, գեղանկար Աթոռոյ Հայրապետական նստեալ մնայր, ընդ առաջնորդութեամբ Տեղակալ Արքեպիսկոպոսի ներկայացաւ Նորին Մըբութեան եւ համբուրեաց զԱ. Աջ Հայրապետական՝ բացեալ զգեղարս եւ բոլորեցաւ առաջի Աթոռոյ: Յորժամ աւարտեաց ուխտն զհամբոյր Ս. Աջոյ, Հոգեւոր Տէր, կանդնեալ յոտս, օրհնեաց զնոսս, խաչակնքեալ, եւ արձակեաց երթալ՝ ի հրաւէր զանդակաց Ս. Պատարագի, որպէս եւ իջեալ ի Վեհարանէ գնացին ի Ս. Տաճար առ ի պաշտել զճաշու ժամ:

Զկնի Միաբանութեան եւ ժառանգաւորաց՝ ներկայացան Նորին Մըբութեան՝ պրոկուրոր, ատենադպիր եւ պաշտօնեայք դիւանտան Սինոդի, գաւառապետ էջմիածնի եւ պաշտօնեայք քաղաքականք, քահանայք, տանուտէր եւ ժողովուրդ Վաղարշապատ գեղջ եւ ուխտաւորք պատուաւորք առ ի չնորհաւորել զգալուստն եւ համբուրեալ զԱ. աջն՝ առնուլ զօրհնութիւնս Հայրապետականս: Եւ ՎԵՀ. Հայրապետ ուղղեաց իւրաքանչիւրոյ զյարմար բանս սիրալիրս եւ զպատուիրանս:

Ի յաջորդ աւուր ի Կիւրակէի էջ Նորին Մըբութիւն ի Ս. Եկեղեցի յառաօտէ եւ ի Ս. Պատարագի ըստ սովորական կարգի:

Յաւուրս յայսոսիկ էջ ՎԵՀ. Հայրապետ ի Ս. Տաճար ընդ ևպիսկոպոսաց գլխաւորաց առ ի անսանել զշինուած տաճարի ի ներքուստ, եւ զպահարանս՝ զաւանդատունս, զմաքրութիւնս, զզգեստս եւ զանօթս կարեւորս: Էին առիթք դժգոհութեանց սակս անմաքրութեանց, փոշեաց եւ անձկութեանց աւանդատանց, զորոց խօսեցաւ, եւ ետ ի մտի հոգալ զայլ եւ այլ կարեւորաց յապաղային:

Յետ զննելոյ զամենայն ափ յափոյ, յորժամ վերադառնայր ի Վեհարան, ի նորոյ կացեալ առաջի իջման Սեղանոյ, որոյ մարմարեայ սիւնք եւ կաթուղիկէ խանդարեն եւ ոչ թոյլ տան ժողովրդեան տեսանել ազատ եւ լիովին զաւադ սեղան եւ զարարողութիւնս, թէպէտ առաւել քան զայնոսիկ խանդարեն լայնանիստ չորեքին սիւնք կաթուղիկէի Տաճարի, վեր ի վերոյ իմն խորհրդակցութեամբ կարծիս ետ Նորին Մըբութիւն բանալ զմաքրմարեայ սիւնս եւ զկաթուղիկէ իջման Սեղանոյ, եւ փոխանակել զկախովի կաթուղիկէ արծաթեայ ամբացուցեալ երկաթաձողովք ի մեծ կաթուղիկէ: Որում հաւանեցան ոմանք, մանաւանդ Սարգիս Արքեալ. Զալալեան, յաւելեալ եւ զբանս խրախուսականս:

Խսկ յորժամ ուղեկցեալ ՎԵՀ. Հայրապետի ըստ սովորութեան

մինչեւ ցարտաքին դուռն՝ վերադառնային եպիսկոպոսունք յիւրաքանչիւր բնակարանս, Զալալեան բաժանեալ յընկերացն՝ փոխէ զճանապարհ իւր եւ շրջեալ զհարաւային եւ զարեւելեան կուսէ Տաճարի՝ անցանէ ընդ զրօսավայր միաբանից, որ կից տաճարի էր յարեւելեան կողմն նախ քան զկառուցանել երից կից պահարանաց, եւ զի էր միջօրէ, եւ միաբանք ելեալ ի սեղանոյ զրօսնուին անդ, ճարտարութեամբ իմն ասէ ոժանց, եթէ « Վեհափառ Տէրն չեւ ես զոլով չին- « եալ ինչ ասա, կամի քանդել զՄ. Սեղանն իջման », եւ անցեալ երթայ ի սենեակ իւր ի Մոմատուն: Եւ այսպէս առթէ զգայթակղութիւն եւ զյուղում ի միաբանութեան:

Անմիջապէս մի ոմն ի միաբանից՝ Ստեփան աբեղայ Միկթարեան փութայ զիմնել ի վեհարան եւ հաղորդէ Պետրոս վարդապետի Տէր - Ստեփանեան (ապա՝ Վեհապետեան), որում ծանօթացեալ էր ի ճանապարհի, զբանս Սարգիս Եպ. -ի եւ կամի ստուգել զճշմարտութիւն:

Ոչ մոռացաւ Նորին Սրբութիւն զգպրանոցն հին յայցելութիւնս իւր, եւ արգահատեցաւ ընդ կարեկցելի վիճակ դպրանոցի (դոլոցի ժառանգաւորաց) եւ աշակերտաց, որոց թիւ ոչ անցանէր առաւել քան զերեսուն: Թիւ սարկաւագաց էր 8-10, որք բնակէին զոյդ - զոյդ ի խուզս որ ի ներքոյ դպրանոցի ի գետնայարկի, որպէս եւ համայն խուզք միաբանից են զետնայարկք: Տեսուչ դպրանոցի էր Թաղէսս վարդապետ Զիւնական, եւ Պօղոս վարդ. Մալխասուեան կարգեալ ի կառավարիչ:

Թէպէտ խոնարհեալ էր յոյժ դպրանոցն ի վիճակ տիրառիթ, այլ սակայն էր ըստ բաւականին աղատ ի բարոյական աղականութեանց, յորպիսիս թաւալէին երբեմն աշակերտք յաւուրս կառավարչութեան Գրիգոր վարդապետի Ալիսակեան, ըստ որում լեալ է եւ այր արքեցող, եւ ասէին դարձեալ, իբր զի խզճահար լեալ էր սակս մահուան Տ. Ներսէս Կաթուղիկոսի Աշտարակեցւոյ եւ յաճախէր յարեցութեան եւ արտասուել առ գերեկմանաւ Հոգելոյս Հայրապետի: (Եւ յաւուրս նորա աշակերտք ի գիշերի պարապեալ ի զողութիւնս՝ յափշտակէին ի գաղանի զջողզայս (խողիկս) յազարակէ Մայր Աթոռոյ, զդինի եւ զցքի ի մասնէ, զիսաղող ի կախանատանց եւ զայլ պիտոյս յայլ եւ այլ տեղեաց, կատարէին զդիշերային խնջոյս: Մինչ զի, յաւուր միում իջանել միոյ աշակերտի ի վայր ի տանեաց պարանաւ առ ի զողանալ զդինի ի մասնէ, փրթեալ պարանք՝ թաւալգլոր անկանի Քանաքեռոցի աշակերտան Ներսէս անուն եւ հաջուածին ոսկերք: Ընկերք ոմանք խորհին սպանանել զնա եւ թաղել ի զաղտնի,

զի մի՛ յայտնեսցին գողութիւնք եւ չարագործութիւնք իւրեանց : Այլք միջամտեն եւ խանդարեն զխորհուրդ, եւ ի գիշերի փախուցանեն զխորտակեալ ներսէս ի գիւղն իւր, եւ տարածայնեն, զի ներսէս ինք-նին խոյս տուեալ է ի զպրամնոցէ :

272

ԳԼՈՒԽ ԾԳ.

ՅԱՂԱԳՍ Ս. ՕՇՄԱՆ Տ. ԳԵՐՈԳԱՅ Դ. Ի ԿԱԹՈՒՂԻԿՈՍՈՒԹԻՒՆ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ի հասանելն Հոգեւոր Տեառն ի Ս. Էջմիածին, յետ աւուրց ինչ խորհրդակցեցաւ ընդ Արքեպիսկոպոսաց ոմանց եւ ընդ անդամոց Սի-նողի եւ որոշեալ զօր հանդիսի՝ Հրամայեաց կատարել զօժումն իւր ի կաթուղիկոս յաւուր վեցերորդ կիւրակէի հինանց ի 21-ն Մայիսի, միանդամայն տեսանել զկարեւոր պատրաստութիւնս :

Հարկ էր գէ՛թ իբր վեց ամսովք յառաջ հրատարակել զկաթու-ղիկոսական օծումն եւ զօր հանդիսի ի գիտութիւն համօրէն ամենայն Հայոց ընդ ամենայն տիեզերս, որոյ վասն պարտ էր սպասել մնալ գէ՛թ ամիսս վեց : Այլ զի ոռւս կառավարութիւն ջանայր եւ հնարս հնարէր փութացուցանել զօծումն կաթուղիկոսական եւ գիւանագի-տական իմն խարդաւանութեամբ պատրուակէր, զի ոչ կարէ բանակ-ցել պաշտօնապէս զկարեւոր գործոց եւ յարդել զառաջարկութիւնս Ս. Կաթուղիկոսի յառաջ քան զնուիրագործել զիւրն կոչում եւ զպաշ-տօն ս. օծմամբ, որ եւ յարուցանէր զծանրակշիռ դժուարութիւնս ի Մայր Աթոռոջ : Եւ իսկական նպատակ ունէր կաշկանդել զկաթուղի-կոս ուխտիւ եւ իբր երդմամբ ստորագրելով ի ոռւսական հպատակու-թիւն, զոր վճարէր առաջի բեմի տաճարի յառաջ քան զմտանելն ի Ս. Պատարագ եւ յառաջ քան զօծումն : Ուստի, առանց թափանցելոյ գաղտնեաց, որոշեցաւ աճապարել կատարել աւուրը յառաջ զՍ. Օ-ծումն կաթուղիկոսական : Յայսիկ ունէին անփորձութիւնք եւ անձ-նական մտածութիւնք զբաժինս իւրեանց :

Ի վերայ այսր ամենայնի, Սինող հեռագրեաց եւ հաղորդեաց զայսմանէ Պատրիարքացն Հայոց Ս. Երուսաղէմի եւ կ. Պոլսոյ, թե-մակալաց եւ Հոգեւոր Ատենից Ուստաստանեայց, առաջնորդաց վի-ճակացն Հայոց Պարսկաստանեայց եւ Հնդկաստանեայց, եւ Հայոց գաղթականութեանց գտանելոց յԵւրոպա :

Եւ ահա հակառակ սուզ միջոցի, փութացին գալ Հայք եւ համա-

խմբել ի Ս. կօմիածին ի շրջակայիցն, յԵրեւանայ եւ ի համայն վիճակն, ի Թիֆլիսէ եւ ի վիճակն, ի Շուշւայ եւ ի վիճակն, ի Շամախոյ եւ յԱստրախանայ եւ ի վիճակացն, ի Դաւրիժոյ եւ ի սահմանաց եւ ի վիճակացն Վանայ, Կարուց, Կարնոյ, Տրավիզոնի եւ յայլոց տեղեաց :

Առթիւ Հայրապետական Օժման՝ յառաջին երեկոյին ի 21-ն Մայիսի կատարեցաւ Հակմումն կանոնական, յորում խմբեալ էր ժողովուրդ բազում յոյժ :

Իսկ յետ առաւոտեան ժամերգութեան առեալ սակաւ ինչ, սոսորագրեց Վեհ. Հայրապետ զերդմնաթուղթն հաւատարմութեան առկայարն ըստ այսմ եղանակի : (Կանխաւ համառոտեաց Հոգեւոր Տէր զերդմնաթուղթն) :

Յարձակման առաւոտեան ժամերգութեան եղին զգրասեղան առաջի աւագ սեղանոյ, ի փոքր ատենի, ծածկեալ կարմիր ջուլսայիւ, եւ ի վերայ նորա զերդմնաթուղթն, դգրիչ եւ զկաղամար : Բոլորեցան զգրասեղանով Սինողականք, անվիխն (ածիլեալ) պրոքուրոր կարապետ Վասակեան եւ ատենադպիր Սինողի Սուքիաս Թաղիանուեան, եւ ոռուսական ներկայացուցիչ ի Կաթուղիկոսական ընտրութեան, նոյն եւ յօծման՝ Պ. Զիլաքվ ոմն ի պաշտօնէից փոխարքայութեան, ամենեցեան պաշտօնական հանդերձիւք եւ կանդնեալ յոտին :

Ի լրանալ պատրաստութեանց եւ ի խմբել անձանցն կարեւորաց՝ էջ Վեհ. Հայրապետ ի կաթուղիկոսարանէ եւ ըստ օտարագիր սովորութեան կանգնեցաւ առաջի գրասեղանոյ՝ դէպ ուղիղ ի Ս. սեղան, ընթերցաւ ատենադպիր զպահարակելի, միանդամայն եւ զսուկալին երդմնաթուղթ հաւատարմութեան յանուն կայսեր Ռուսաց, եւ ինքն Հոգեւոր Տէր ստորագրեաց ակամայ կամօք ու հարկի գթուղթ լրտեսութեան եւ մատնութեան, զորոյ զվրէժ էառ յամի 1881, յետ սպանման կայսերն Աղեքսանդրի Բ. եւ ի յաջորդել որդոյ նորա Աղեքսանդրի յամսեանն Մարտի, յորժամ ներկայացուցին նորին Սրբութեան համաձայն օրինաց Ռուսաց (ըստ որոց պարտին համայն արական ոռուսահպատակը ստորագրել հանդիսաւորապէս զթուղթ հաւատարմութեան) զնոր երդմնաթուղթ յանուն նորոյ կայսեր առ ի ստորագրել, կրծատեաց եւ համառոտեաց յոյժ՝ բարձրեալ իսպառ զպարբերութիւն սոսկալիս զլրտեսականս, զմատնիչականս եւ զայլս այսպիսի յօդուածս ստորնականս, ի սենեկի իւրում ստորագրեաց զթուղթն հաւատարմութեան՝ յաւելիալ եւ զայս, ըստ սպիրութեան տեղույս ստորագրեմ : Եւ յանձնեաց սինողական Մեսրոպ եպ. ի Սմբատեանց տանել յանձնել դիւանին :

Յաւարտել սովորութեանդ, վերադարձաւ Վեհ. Հայրապետ ի Կաթուղիկոսարան, եւ զկնի փոքու միջոցի սկսան զանդակք դղբդեցանել շրջակայու, եւ հրաւիրել ի ճաշու ժամն:

Պատարագիչ էր Նորին Սրբութիւն եւ զգեստաւորեցաւ ի Վեհարանի, որպէս եւ եպիսկոպոսունքն առին անդ յայլում սենեկի զգեստսն եպիսկոպոսականն: Զգեստաւորեալն էին.

1. Գէորգ Արք. Վեհապետեան, Տեղակալ.
2. Մակար Արք. Տփխեաց.
3. Մարգիս Արք. Արցախու.
4. Իգնատիոս Արք. Վասպուրականի.
5. Յարութիւն Արք. Կարնոյ.
6. Յովհաննէս Եպ. Կարուց.
7. Մկրտիչ Եպ. փոխ. թեմակալ Երեւանայ
8. Դանիէլ Եպ. Շամախուոյ.
9. Յովհաննէս Եպ. Առանեան.
10. Գրիգոր Եպ. Յորեան.
11. Սնդրէաս Եպ. Կ. Պոլսեցի.
12. Արէլ Եպ. Միսիթարեան:

Յետ Ոգորմեայի եւ աղօթից եւ այլոց ըստ ճաշու ժամու, մինչ հարկ էր մտանել ի Ս. Պատարագ, եւ ժամօրհնողն (մաղթանքասաց) ասէր զշայր մեր եւ զհանգստեան զարօրս, հնչեցին զանդակք, կաղմեցաւ թափօրն՝ սկսեալ ի Վեհարանէ:

Յառաջընթաց լինէին Երկոքին կարմրահանդերձ շարիբք ունելով ի ձեռինս զարծաթեայ զունդապղուխս իբր ցուալս, որոց հետեւին շապկազգեցիկ դպիրք եւ աշակերտք, ասկա զգեստաւորեալ Երկոտասան եպիսկոպոսունք հանդիպակաց յերկուս կարգս բաժանեալ, զինի նոցա պատարագիչ Ս. Հայրապետ ընդ Ամֆիովանեաւ, առանց ունելոյ զառաջեաւի զովորական Քօղ Հայրապետական, գաւաղանակիրն եւ քշոցակիրք հետեւէին Նորին Սրբութեան, որում յառաջընթաց էին յերկուս կողմանս Երկոքին զրօշակակիրք եւ մոմակալք, լապտերք եւ խաչվառք իբր զոյդ - զոյդ վերջինք, բաց յերկզոյդ մոմակալաց, յաճախ Երթան յետ շաթրաց եւ նախ քան զդպիրս:

Յիջանել Վեհ. Հայրապետի ի Վեհարանէ ընդ եպիսկոպոսացն զգեստաւորելոց, առաջի արտաքին հնոյ դրան Կաթուղիկոսարանի կազմեալ մնայր միւս մասն թափօրի, եւ դպիրք Երգէին զԽորհուրդ խորին. չորեքին բուրգառակիրք, որք ասացին ի դրան ի Վեհարանի եւ եւս խալաղութեան եւ այլն, միալար, միաձեւ եւ յետաղնաց խընկարկէին Նորին Սրբութեան (Երթալ յետս - յետս):

Դժուարանայր զինուորական կիսավաշտն եկեալ յԵրեւանայ ողահաննել զկարգապահութիւն, այնչափ խմբեալ էր ժողովուրդ բաղում, եւ հասյր զեռայր առ ի տեսանել զվեհ. կաթուղիկոս եւ զհանդէս թափօրի:

Ի հասանել թափօրի ի Ս. Տաճար եւ ի մտանելն ընդ մեծ գուռն արեւմտեան, սկսան զպիրք երգել զՀրաշափառ Աստուած, մինչեւ ել վեհ. Հայրապետ ի բևմ սակա բազմութեան ժողովարդեան— մինչ հարկ էր առնել զլուացումն եւ ասել զՄեղայն առաջի բեմի ի փոքր ատենի: Եսլիսկովոսունք զգեստաւորեալք կանգնեցան յԵրկուս կողմանս աւագ սեղանոյ, եւ յԵտկոյս նոցա բուրժառակիրք, քշոցակիրք եւ այլք:

Շարունակեցաւ արարողութիւն Ս. Պատարագի մինչեւ ցՈղ-ջոյնն: Յայնժամ սկսաւ հանդէս Ս. Օծմանն:

Համաձայն կարգի, որ ի ձեռնազրութիւն քահանայից եւ եպիսկոպոսաց, էջ ի ծունկս Հոգեւոր Տէր, յետ բոլորելոյ եպիսկոպոսաց ընդ հանդիսապետութեամբ Տեղակալ Տ. Գէորգ Արք. Վեհապետեան, եղանակեցին զպիրք զքարոզս, ընթերցան եպիսկոպոսունք զաղօթու եւ զայլս ըստ կանոնի, եւ Օծին զգագաք Նորին Սրբութեան եւ նուիրագործեցին զԼեհափառ Հայրապետ Ազդի եւ Եկեղեցւոյ Հայտատանեայց՝ արկեալ զգլխովն զսպիտակ Քօղն Հայրապետական, որ եւ մնաց մինչեւ ել ի Վեհարան:

Յաւարտել կանոնի Ս. Օծման Հայրապետի՝ խօսեցաւ Նորին Սրբութիւն զքարոզ իմն սրտաշարժ, զպարզեալ զնշանակութիւն օծման եւ զպարտոս կոչման իւրոյ առաջի Աստուծոյ, Ազդի եւ Եկեղեցւոյ Հայտատանեայց, եւ կնքեաց զբանսն հանդերձ բարեմադթութեամբք:

Ապա ետ Հոգեւոր Տէր զՈղջոյն Եպիսկոպոսաց, որք եւ արտաքոյ կարգի սովորականի՝ մի առ մի խոնարհեալ համբուրեցին զՍ. Աջն Հայրապետական: Շարունակեցաւ Ս. Պատարագ:

Ի լրանալ Ս. Պատարագի եղին ի նորոյ ի զլուխ Ս. Հայրապետի ի վերայ Քօղի զվերջամուտ (ի Կիլիկիոյ) Թագմ քննադատելի, կազմեցաւ թափօր, որպէս Եղեւ ի մտանելն ի Ս. պատարագ, եւ ել Հոգեւոր Տէր ի Վեհարան երգովք շարականաց Որ շնորհս (ի ձանապարհի) եւ Այսօր Քահանայապետ (ի կաթուղիկոսարանի): Ասաց զՊահպանիչ ընդ Հայր մերի, օրհնեաց զներկայս ըստ կարգին եւ արձակեաց առ ժամս զթափօրականս եւ զայլս: Եւ ինքն եմուտ ի ներքին սենեակ:

Հանեալ Ս. Հայրապետի զքօղ եւ զգեստն, յետ լուացման, եկն ի մեծ դահլիճ (Ծաղկեայ այլան) կաթուղիկոսական ընդունելու-

թեան, բարձրացաւ յԱթոռ մեծ, ի նորոյ ընկալաւ յիւր ներկայութեան զհամայն եպիսկոպոսունս, զվարդապետու, զաւագ քահանայու, զուուսական ներկայացուցիչ, զնահանդապետ Երեւանայ, զվրոկուրոր, զգաւառապետ Վաղարշապատու եւ զդիմաւոր եւ զպատուաւոր ուխտաւորս Հայադիմս ընդ այլոց պաշտօնէից եւ ի պատասխանի ըընորհաւորական մաղթանացն օքնեաց զնոսա զամենեսին հանդերձ փոխադարձ բարեմաղթութեամբք :

Եղին պաշտօնական հացկերոյթք ի Վեհարանի եւ ի Միաբանական սեղանատան, «չ մուացան զբաժակաճառս եւ զբանախօսութիւնս, յաջորդէին միմեանց կեցցէք, որոտային հրացանք, երգէին դպիրք պարբերաբար, որպէս նուագէին եւ զինուորական նուագածուք հրաւիրեալք Երեւանայ, եւ առանձինն դաւուլ - զունա ժողովրդական եւ տեղական : Տիրէին ուրախութիւն մեծ եւ ոգեւորեւթիւն ընդհանուր :

Յերեկոյին մինչեւ ցկէս զիշեր Եղին լուսավառութիւնք եւ հրախաղութիւնք : Շինական եւ զինուորական նուագածուք նուագէին պարբերաբար, շինական հայ օրիորդք եւ երիտասարդք բոլորէին դպարս առանձին - առանձին ի հրապարակի ի ներքս Մայրավանուց, չուրջ զլճաւ եւ ի հրապարակի որ առաջի հիւսիսային մեծի դրան պարսպի, երգէին զերգս դաւառականս եւ արտայայտէին զուրախութիւն մեծ :

Ընդ երէկս մեկնեցան նշանւոր պաշտօնեայք ուստականք ի Ս. էջմիածնէ, որպէս եւ ի յաջորդ աւուրս սկսան հետզհետէ վերապառնալ բազումք յուխտաւորաց եւ զինուորականք, իսկ որք մնացին՝ սպասէին հանդիսի ձեռնազբութեան եպիսկոպոսաց :

Բազմութիւն ժողովրդեան ուխտաւորաց եւ այլոց անցանէր առաւել քան զհնդետասան հազար անձինս :

Ի հանդիսի օծման ներկայ էին իրր զչորեքտասան եպիսկոպոսունք, վարդապետք առաւել քան զիխուն եւ չորս, քահանայք եւ աւագք առաւել քան զիօթանասուն անձինս, եւ նշանաւոր հայազգիք Արսէն Սուլթան Գեղամեան Երեւանցի, Սիրական Աղա Գորոյեան Ալեքսանդրապոլցի, Յարէթիկ Նէվրուզեան եւ Մաղաք Մաղաքեան ի Կ. Պոլսոյ, Շահնազարեանք ի Շուշլոյ, յԱգուլիսոյ, ի Հին եւ ի Նոր Նախիջեւանաց եւ այլք :

(ՎԵՐՋ Ա. ՄԱՍԻ)